

**Մրցույթ «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար**

16. 06. 2022

Տիպ՝ [Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների թափուր պաշտոններ](#)

Հայտատու՝ «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդ  
ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշում

Մրցույթի հայտարարություն

«Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի համաձայն՝

«Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի հունիսի 20-ից սեպտեմբերի 1-ը ներառյալ (չներառելով հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 31-ը ընկած ամառային արձակուրդի ժամանակահատվածը), ամեն օր՝ ժամը 9:00 –ից մինչև ժամը 15:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի սեպտեմբերի 15-ին՝ ժամը 15:00-ին,

«Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում

Հասցե՝ ք. Քաջարան, Արսլան 12

Տեղեկությունների համար դիմել

խորհրդի նախագահ Մարի Հակոբյանին (հեռ. 093-99-02-34\_ էլ.հասցե hakobyan-mary@mail.ru)

խորհրդի անդամ Լարիսա Ստեփանյանին (հեռ. 093-28-47-03\_ էլ.հասցե kajaran2@schools.am)

Հասցե՝ ք. Քաջարան, Արսլան 12

Հեռ.՝ (285) 3-21-23